ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Արտերկրի հայկական պատմա-մշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանման խնդիրներին էր նվիրված մայիսի 20-24-ը Երևանում անցկացված գիտաժողովը, որին մասնակցում էին տասնվեց երկրներից ժամանած թվով ութսուն մասնակիցներ: Այն կազմակերպվել էր ՀՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարության, ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանման վարչության համատեղ ջանքերով, ինչպես նաև Հայկական հուշարձանների պետական ֆոնդի (ԺՆԿ), «Երկիր և մշակույթ» կազմակերպության, Հայկական ճարտարապետության ուսումնասիրության կենտրոնի (RAA), Unesco-ի և Icomos-ի հայկական ընկերությունների օժանդակությամբ:

Գիտաժողովի բացումը տեղի ունեցավ ՀՀ Ազգային Ակադեմիայի կենտրոնական սրահում՝ մշակույթի նախագահ պարոն Ռոլանդ Շառոյանի նախագահությամբ: Ողջույնի խոսքերով հանդես եկան՝ հանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը (տե՛ս էջ 20), ՀՀ Ազգային ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը և ուրիշներ:

Լիագումար նիստին զեկույցներ կարդացին Հուշարձանների պահպանության վարչության նախագահ Գ. Գյուրջյանը, Հայկական պատմական հուշարձանների պահպանության ֆոնդի (ԺՆԿ) նախագահ Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Ժան Միշել Թիերին (Ֆրանսիա), Թոմ Սամուելյանը (ԱՄՆ), Գեղամ Գևոնյանը (Ֆրանսիա), Տ. Միքայել ծ. վրդ. Աջապահյանը (Հայաստան):

Շաբաթ և կիրակի օրերին չորս նիստերով և երկու մասնաճյուղերով ներկայացվեցին 36 զեկույցներ՝ Հայաստանի, ազատագրված տարածքների, Վրաստանի, Նախիջևանի, Թուրքիայի, Իրանի, Ռումինիայի, Եգիպտոսի, Լեհաստանի, Հունգարիայի և Իտալիայի հայկական հուշարձանների ու եկեղեցիների մասին:

Երկու մասնաճյուղերի ներկայացրած թեմաներն էին՝ ա) Վիճակագրություն և իրավունք («Հայկական անշարժ հուշարձանների վիճակն արտերկրում և դրանց պահպանության կազմակերպումն ըստ միջազգային ու պետական օրենքների») և բ) Հետազոտում («Արտերկրի հայկական պատմա-մշակութային ժառանգության վավերագրման և ուսումնասիրման խնդիրները»):

Նիստերն անցկացվեցին «Էրեբունի» հյուրանոցի սրահում, ուր և կազմակերպվել էր ճարտարապետական ցուցահանդես:

Առանձնակիորեն կարևորելով այս համաժողովի նշանակությունը, շաբաթ օրը, հետկեսօրին, չնայած առողջական ծանր վիճակին, մասնակիցներին ընդունեց Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսը: Վեհարանի սրահում Նորին Սրբության օրհնանքի խոսքն ընթերցեց Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: Ապա հյուրերն այցելեցին Մայր Տաճար, Սուրբ Գայանե և Սուրբ Հռիփսիմե եկեղեցիներ, Զվարթնոցի ավերակված տաճար:

Կիրակի երեկոյան, վերջին լիագումար նիստին, գիտաժողովն ընտրեց համազգային խորհուրդ և 25 անդամներից բաղկացած գործադիր մարմին:

Ժողովը որոշեց նաև հրատարակել հռչակագիր՝ միաժամանակ խնդրելով զանգվածային լրատվամիջոցների լայն արձագանքն ու աջակցությունն այդ խնդրում: